ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑ ԿԱՆՉ

ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

GOETHE INSTITUT

Sprache. Kultur. Deutschland.

ԲԱՑ ԿԱՆՉ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գյոթե ինստիտուտը հայտարարում է բաց կանչ որակավորված տուրիստական գործակալության հետ շրջանակային համաձայնագիր կնքելու նպատակով: Ծառայության առարկան է մասնագիտական աջակցություն ապահովել Գյոթե ինստիտուտի հյուրերի համար տոմսերի և դրանց հետ կապված տուրիստական ծառայությունների ամրագրման գործում:

ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

- Ապահովել հուսալի և ծախսարդյունավետ ճանապարհորդական ծառայություններ
- Ապահովել հրավիրված հյուրերի և անձնակազմի միջազգային և ներքին ճանապարհորդությունների սահուն կազմակերպումը:
- Երաշխավորել բարձրորակ ծառայություններ և դրսևորել ճկունություն փոփոխությունների կամ չեղարկումների մշակման հարցում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՒՅԹԸ

- Ավիատոմսերի ամրագրում. միջազգային և ներքին չվերթների ամրագրում, վերաամրագրում և չեղարկում:
- Ամրագրումների կառավարում. միջազգային և ներքին չվերթների ամրագրում՝ համաձայն Գյոթե ինստիտուտի պահանջների: Ապահովել բազմաթիվ ավիաընկերությունների և սակագնային դասերի հասանելիություն՝ ծախսարդյունավետ տարբերակներ ապահովելու համար:
- Վերաամրագրում և չեղարկումներ. ճանապարհորդության ամսաթվերի, ժամերի կամ երթուղիների փոփոխությունների արագ մշակում: Չեղարկումների և վերադարձների կառավարում՝ համաձայն ավիաընկերությունների քաղաքականության:
- Գների օպտիմալացում. մրցակցային գնառաջարկ և սակագնային տատանումների մոնիթորինգ: Խորհրդատվություն ճկուն տոմսերի տարբերակների վերաբերյալ՝ փոփոխությունների ծախսերը նվազագույնի հասցնելու համար: Ապահովել Գյոթեի ինստիտուտի ճանապարհորդական քաղաքականությանը համապատասխանությունը:
- Արտակարգ իրավիճակների աջակցություն. օգնություն անհապաղ փոփոխությունների, բաց թողնված չվերթների կամ խափանումների դեպքում:

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝

Երկու տարի, ևս երկու տարով երկարաձգման հնարավորությամբ։

ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝

Բաց ընթացակարգ՝ համաձայն ազգային գնումների կանոնակարգերի։

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Գին (50%)
- Ծառայության որակ և մատչելիություն (30%)
- Տեխնիկական կարողություն մեծ քանակությամբ ամրագրումներ կատարելու համար։ Տուրիստական գործակալությունները պետք է ունենան համապատասխան ենթակառուցվածքներ, գործընթացներ և ռեսուրսներ, որոնք երաշխավորում են հուսալիություն և մասշտաբայնություն։ (20%)

ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Ամրագրման համար հայտը ներկայացնելուց հետո առավելագույնը 2 օրվա ընթացքում ապահովել հասանելի տոմսեր։
- Միջազգային մշակութային հաստատությունների կամ ՀԿ-ների հետ աշխատանքի ապացուցված փորձ։

ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Հետաքրքրված դիմորդներին հրավիրում ենք ներկայացնել իրենց առաջարկները մինչև 25.05.2026թ։ Խնդրում ենք Ձեր դիմումներն ուղարկել հետևյալ հասցեով՝ hasmik.muradyan@goethe.de

ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԱՉԱՓ

- Ուղեկցող նամակ, որում պետք է լինի ընկերության համառոտ ներկայացումը և համագործակցության նկատմամբ հետաքրքրության հաստատումը։
- Գնառջարկի փաստաթղթեր. խնդրում ենք ուղարկել Մյունխեն-Երևան-Մյունխեն երկկողմանի չվերթի 3 հնարավոր տարբերակ 2026 թվականի մայիսի 30-ից հունիսի 5-ի համար։ Մանրամասն նշել, թե որքան արժե տոմսը, որքան արժե ծառայության միջնորդավճարը և որքան արժե չեղարկման տուգանքը։

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԱՆՁ

Հասմիկ Մուրադյան
Վարչական մարմնի ղեկավար
Էլ. փոստ՝ hasmik.muradyan@goethe.de
Հեռ.՝ +374 60 50 47 11